Բուժող ձեռքեր

Բյուջե

Նպատակը

Սևանի Երեխաների Վերականգնողական Կենտրոնը բազմաֆունկցիոնալ թերապևտիկ սեղանով ապահովելը, որը մասնագետներին հնարավորություն կտա վերականգնողական թերապիայի ընթացքում անվտանգ դիրքավորել և տեղափոխել ծանր շարժունակության խնդիրներ ունեցող երեխաներին:

Նկարագրություն

«Սևանի Երեխաների Վերականգնողական Կենտրոնը ծառայություններ է մատուցում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին Սևան քաղաքից, հարակից 11 գյուղերից, մոտակա համայնքներից և վերջին տարիներին նաև Հայաստանի տարբեր մարզերից: Ամեն տարի կենտրոնում վերականգնողական թերապիա է ստանում շուրջ 270 հաշմանդամություն ունեցող երեխաներ, մինչդեռ ավելի քան 100 երեխա շարունակում է սպասել հերթում:

Կենտրոնի շահառուներից շուրջ 70-ը դեռահասներ են՝ ծանր հենաշարժողական խնդիրներով: Նրանց սահմանափակ շարժունակության և հավելյալ ֆիզիկական աջակցության անհրաժեշտության պատճառով թերապևտների համար հաճախ չափազանց դժվար կամ անհնար է լինում երեխաներին ճիշտ դիրքավորել և տեղափոխել սովորական անշարժ մակերեսների վրա: Արդյունքում՝ թերապիայի սեանսները դառնում են պակաս արդյունավետ, իսկ որոշ դեպքերում նույնիսկ անհնար է լինում ապահով իրականացնել դրանք:

Բազմաֆունկցիոնալ թերապևտիկ սեղանի ձեռքբերումը զգալիորեն կբարելավի վերականգնողական ծառայությունների որակն ու արդյունավետությունը: Սեղանը մասնագետներին հնարավորություն կտա բուժման ընթացքում անվտանգ վերադիրքավորել երեխաներին՝ դարձնելով բարդ թերապիաներն առավել հասանելի, նպատակային և արդյունավետ: Նախագիծը անմիջականորեն կբարելավի ծանր շարժունակության խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների վերականգնողական գործընթացն ու կյանքի որակը»:

Բյուջե

Անվանում	Քանակ	Արժեք/ հատ	Ընդամենը
Բազմաֆունկցիոնալ տապչան	1	֏1,400,000	֏1,400,000

Ընդհանուր

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար = *365* ՀՀ դրամ

֏1,400,000